Հավելված
Հաստատված է
ՀՀ առողջապահության նախարարի
07. փետրվար 2013թ. 229 - Ա հրամանով

Անհետաձգելի բժշկական օգնություն պահանջող հիվանդությունների և վիճակների
/18 տարեկան և բարձր տարիքի անձանց համար/

1. Անհետաձգելի բժշկական օգնություն և գինեկոլոգիական բժշկական օգնություն ծառայություններ

1) Շիճուկային հիվանդություն
2) Սուր թրոմբոզներ և թրոմբոէմբոլիաներ (բացառությամբ թութքի) /միայն վիրահատական միջամտությամբ ավարտված դեպքերը /
3) Գիյեն-Բարեի սուր պոլինեյրոպաթիա՝ պարալիչի զարգացումով
4) Ինսուլտ /հեմոռագիկ, իշեմիկ/ (բացառությամբ վերակենդանացման բաժանմունքի)
5) Սրտամկանի սուր ինֆարկտ (բացառությամբ վերակենդանացման բաժանմունքի)
6) Սուր երիկամային անբավարարություն
7) Ցանցաթաղանթի կենտրոնական անոթների սուր անանցանելիություն
8) Տեսողական օրգանի վնասվածքներ, ակնախնձորակի ամբողջականության խախտում
9) Պնևմոթորաքս /սպոնտան և վնասվածքային/ միայն վիրահատությամբ ավարտված դեպքերի՝ բացառությամբ պունկցիայով ավարտված դեպքերի
10) Սեպսիս /արյան ցանքսով հաստատված/
11) Տարածուն պերիտոնիտ
12) Խոռոչավոր օրգանների թափածակում՝ հաստատված հյուսվածաբանական հետազոտությամբ (բացառությամբ որդանման ելունի և լեղապարկի)
13) Սուր որովայն (օղակված ճողվածք, /միայն ՀՀ մարզերի բուժհաստատություններում/)

14) Արտաքին և ներքին (երակային և զարկերակային) պրոֆուզ արյունահոսություններ, /բացառությամբ քթային արյունահոսությունների և թութքի/, ներանոթային տարածուն մակարդման /**ДВС**/ համախտանիշ

15) Ոսկրերի բաց կոտրվածքներ, փակ կոտրվածքներ բեկորների տեղաշարժով (ողնաշարի ոսկրեր, կոնքի ոսկրեր, բազկոսկր, ճաճանչոսկր, ծղիկոսկր, ազդրոսկր, մեծ ոլոք)

16) Գանգուղեղային (գլխուղեղի սալջարդ) և ողնուղեղի վնասվածքներ

17) Թափանցող վնասվածքներ՝ կրծքավանդակի, որովայնի, կոնքի օրգանների, գլխուղեղի, ողնուղեղի վնասվածքներով

18) Պոլիտրավմա /խոշոր ոսկրերի և/կամ ներքին օրգանների համակցված վնասվածքներ/(բացառությամբ վերակենդանացման բաժանմունքի)

19) Մարմնի արտաքին ծածկույթի այրվածքներ՝ 1-ին աստիճանի՝ մարմնի 50 տոկոսից ավել մակերեսով, 2-րդ աստիճանի՝ մարմնի 10 տոկոսից ավելի մակերեսով, 3-րդ, 4- րդ աստիճանների այրվածքներ՝ մարմնի 1 տոկոս և ավելի մակերեսով

20) Սուր հեմոլիտիկ կրիզներ, սակավարյունություն (Hb-60 գ/լ և պակաս կամ էրիթրոցիտների քանակը=1.7x 10^{12}/լ և պակաս)

21) Արտարգանդային հղիություն, ձվարանի ապոպլեքսիա

22) Անոթային անևրիզմաների պատռվածքներ և շերտազատումներ, բացառությամբ աորտայի անևրիզմաների և նյարդավիրաբուժական էնդովասկուլյար ռեկոնստրուկտիվ բուժման

23) Միոմատոզ հանգույցի, ձվարանի ուռուցքների, ուռուցքանման և թարախային գոյացությունների տոտիկի ոլորում, պատյանի պատռում, հանգույցի նեկրոզ, ծնվող ենթալորձային միոմատոզ հանգույց

2. Օնկոհեմոտոլոգիական ծառայություն

1) Օրգան համակարգերի ախտորոշված չարորակ նորագոյացություններ

2) Օնկոհեմատոլոգիական հիվանդություններ /Հոջկինյան և Ոչ Հոջկինյան լիմֆոմաներ/

3. Սեռական ճանապարհով փոխանցվող և մաշկային հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ

1) Սիֆիլիսի բոլոր ձևերը
2) Միկրոսպորիա և տրիխոֆիթիա
3) Պսորիատիկ էրիթրոդերմիա և արթրոպատիա
4) Բշտային մաշկախտեր